



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 հուլիսի 2019 թվականի թիվ 78-Ա  
ք. Երևան

#### «ՀԻԲՐԻԴ ՍՈՒՅՈՒՇՆԱԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏՐԱԳԻՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻԲՐԻԴ ՍՈՒՅՈՒՇՆԱԿ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստադրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի հուլիսի 11-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՀԻԲՐԻԴ ՍՈՒՅՈՒՇՆԱԿ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստադրագրի վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստադրագրի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

<b>Հեռուստադրագրի անվանումը</b>	<b>Թույլտվության ժամկետի ավարտը</b>
«RU.TV»	31.12.2019թ.